Արձանագրություն N 5
ՀՀ ՈԿ-ԳՀԱՊՁԲ-18/5 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19 ապրիլի 2018թ
ժամը 12:45

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ. Մուրադյանը
անդամներ՝ Հ. Մարգարյանը, Գ.Դանիելյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին

(Մ. Մուրադյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Հրավերով սահմանված ժամկետում «ՎԻ ԷԼ ՎԻ սենթր» ՍՊԸ-ն հանձնաժողովին է ներկայացրել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Մասնակցի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ մասնակցի կողմից ներկայացրած հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, ապրանքների տեխնիկական բնութագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հանձանաժողովը որոշեց «ՎԻ ԷԼ ՎԻ սենթր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ «ՎԻ ԷԼ ՎԻ սենթր» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել՝ 1-ին, 5-րդ չափաբաժինների համար:

Ընտրված մասնակից է ճանաչվել որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Մ. Մուրադյան)

5. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պայմաններով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Մ. Մուրադյան

անդամներ՝ _____ Հ. Մարգարյան

_____ Գ. Դանիելյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան